

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 5

ԳՊՄԻ պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 18. 12. 2014թ. նիստի՝

մասնակցությամբ խորհրդի 17 անդամների,

նախագահությամբ դեկան Ս.Հայրապետյանի

ՕՐԱԿԱՐԳ - 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի առկա համակարգի

**ուսանողների առաջին կիսամյակի երկրորդ միջանկյալ ստուգման
հարցաշարերի հաստատում**

**2. Մագիստրոսական թեզերի թեմաների հաստատումը ըստ
ուսանողների եւ դասախոսների**

**3. Ֆակուլտետի առկա համակարգի ուսանողների ամփոփիչ
քննության հարցատոմսերի հաստատում**

4. Ընթացիկ հարցեր

ԼՄԵՑԻՆ - ֆակուլտետի առկա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի երկրորդ միջանկյալ ստուգման հարցաշարերի քննարկման եւ հաստատման մասին մասնագիտական ամբիոնների վարիչների հաղորդումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Խաչիկյան, Ե.Վարդանյան, Մ.Խաչատրյան, Ս.Կուրազյան, Ա.Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Մասնագիտական ամբիոնների վարիչների ներկայացմամբ՝ հաստատել ֆակուլտետի առկա համակարգի ուսանողների առաջին կիսամյակի երկրորդ միջանկյալ ստուգման հարցաշարերը:

ԼՄԵՑԻՆ - Ըստ ուսանողների եւ դասախոսների մագիստրոսական թեզերի թեմաների մասին մասնագիտական ամբիոնների վարիչների հաղորդումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.Խաչատրյան, Գ.Խաչիկյան, Ե.Վարդանյան, Գ.Հարությունյան, Գ.Ալեքսանյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Մասնագիտական ամբիոնների վարիչների ներկայացմամբ՝ 2014-2015 ուստարվա մագիստրոսական կուրսերի համար ըստ ուսա-

նողների եւ դասախոսների հաստատել մագիստրոսական թեզերի թեմատիկան:

ԼՍԵՑԻՆ - ֆակուլտետի առկա համակարգի ուսանողների ամփոփիչ ստուգումների հարցատոմսերի հաստատման մասին մասնագիտական ամբիոնների վարիչների հաղորդումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Մ.Խաչատրյան, Ա.Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Մասնագիտական ամբիոնների վարիչների ներկայացմամբ՝ հաստատել ֆակուլտետի առկա համակարգի ուսանողների ամփոփիչ ստուգումների հարցատոմսերը:

Ընթացիկ հարցերից՝

ԼՍԵՑԻՆ - ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը հեռակա ուսուցման 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Վարդանյան, Ե.Վարդանյան, Ն.Ստեփանյան, Գ.Խաչիկյան, Մ.Խաչատրյան

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. ֆակուլտետի հեռակա ուսուցման 1-3-րդ կուրսերի 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացը, որն իրականացվեց նոյեմբերի 3-30-ը, գնահատել բավարար:

2. Լուրջ ուշադրություն դարձնել հեռակա ուսուցման 4-5-րդ եւ գրադարանային գործ մասնագիտության 1-ին կուրսերի 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացին, որն առաջին անգամ անցկացվում է ս/թ. դեկտեմբերի 1-26-ը:

3. Դեռեւս բավարար չէ աշխատանքը անհարգելի բացակայությունների նվազեցման ուղղությամբ հատկապես բարձր կուրսերում:

4. Պահանջել մասնագիտական ամբիոններից ուշադրության կենտրոնում պահել հեռակա բաժնի ուսանողների մասնագիտական խորհրդատվության խնդիրը, նրանց մասնագիտական գրականությամբ, հատ-

կապես էլեկտրոնային դասախոսությունների փաթեթներով ապահովելու հարցերին:

4. Բացառել ուսումնական գործընթացում դասախոսների անհարգելի բացակայությունները:

ԼՄԵՑԻՆ - ինստիտուտի գիտության եւ արտաքին կապերի բաժնի կողմից ներկայացված մի քանի ներբուհական իրավական ակտերի քննարկումը /հաղորդում՝ դեկան Ս.Հայրապետյանի/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Հայրապետյան, Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Ս.Խաչատրյան, Ա.Հովհաննիսյան, Է.Չոբանյան, Ա.Նորիկյան

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հավանություն տալ ավարտական աշխատանքների կազմակերպման մասին ներբուհական իրավական ակտի նախագծին, նկատի ունենալով, որ ընթացակարգը ընդհանուր առմամբ համապատասխանում է ավարտական աշխատանքի կատարման պահանջներին եւ բավարարում նման աշխատանքի կազմակերպման պահանջները:

2. Անհատական աշխատանքի կազմակերպման մասին կանոնակարգի մի շարք դրույթների վերաբերյալ եղան առաջարկություններ.

ա/ անհատական աշխատանքին ներկայացված պահանջները խիստ չափազանցված են, բնորոշ կուրսային կամ ավարտական աշխատանքին:

բ/ անհատական աշխատանքի թեմատիկան պետք է հաշվի առնի դասընթացի առանձնահատկությունները,

գ/ 3.2.2-ի պահանջը տեղին չէ, այն ընդհանրապես պիտի հանել,

դ/ Ավելորդ է 3.4.4 կետը,

ե/ պիտի պարզեցվեն եւ խմբագրվեն 3.5 կետի ենթակետերը,

բանհասկանալի է 3.7.3-ը

զ/ անհասկանալի է գնահատման կարգը եւ անհարկի բարդեցված,

ավելորդ է նաեւ 3.7.6 կետը:

է/ անհատական աշխատանքի կազմակերպման մասին ընթացակարգը նշված թերությունների պատճառով ընդունելի չէ եւ կարիք ունի վերանայման:

3. Ակադեմիական խորհրդատուներին վերաբերող կանոնակարգի մասին եղավ մեկ առաջարկ՝ խորհրդատուի աշխատանքը պիտի լինի վճարովի կամ այդ աշխատանքի համար սահմանված ժամաքանակը ներառվի դասախոսի դասաբաշխման մեջ: Ընթացակարգի նախագիծը միանգամայն ընդունելի է:

ԼՄԵՑԻՆ - ֆակուլտետի կողմից մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների ցանկի կազմման մասին դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Խաչիկյան, Ս.Խաչատրյան, Ա.Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել եւ ինստիտուտի արտաքին կապերի բաժին ներկայացնել ֆակուլտետի կողմից մարզի ավագ դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների ցանկը /տե՛ս կից/:

Խորհրդի նախագահ՝

Ֆակուլտետի դեկան

նիստի քարտուղար

Ս. Հայրապետյան

Է. Չոբանյան